ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 30 ապրիլի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Գարեգին Ղազարյանի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Գարեգին Ղազարյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2015 թվականի ապրիլի 17-ին)՝ խնդրելով.

1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 12-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և 23-րդ հոդվածներին հակասող և անվավեր.

2) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ, 27.1-րդ և 42-րդ հոդվածներին հակասող և անվավեր.

3) ՀՀ դատական օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր.

4) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, 18-րդ և 20-րդ հոդվածներին հակասող և անվավեր.

5) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, 14.1-րդ, 18-րդ, 19-րդ, 27.1-րդ, 100-րդ, 101-րդ և 102-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Ըստ դիմողի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով ամրագրված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի իրացումը խոչընդոտվել է բոլոր երեք ատյանների դատարանների կողմից, ինչի արդյունքում ոտնահարվել են իր՝ մի շարք այլ սահմանադրական իրավունքներ ևս:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ գտնում ենք, որ դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասի, 1087.1-րդ հոդվածի 13-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241.2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի առնչությամբ՝

- խնդրո առարկա անհատական դիմումն ակնհայտ անհիմն է: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ հոդվածներով նախատեսված են իրավասու սուբյեկտների կողմից սահմանադրական դատարան հասցեագրված դիմումներին ներկայացվող ընդհանուր պահանջները, դիմումին կցվող նյութերի շրջանակը, իսկ անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման է նույն օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ դիմումը պետք է պարունակի նաև Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանը 24.11.2009թ. ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի հիշյալ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Անհատական դիմումին ներկայացված այս պահանջը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող դրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Խնդրո առարկա դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չեն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին համահունչ իրավաբանորեն ձևակերպված հիմնավորումներ, ինչպես նաև դիմողը չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը.

- դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքների դրույթների սահմանադրականության հարցը՝ ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ

էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ».

- խնդրո առարկա անհատական դիմումով վիճարկվող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 13-րդ մասով առաջադրված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշումը, ինչը, որպես գործի քննությունը մերժելու հիմք, ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով,

2) ՀՀ դատական օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ՝

- դիմողի կողմից վիճարկվող դրույթները նրա նկատմամբ չեն կիրառվել:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին եւ դրա հիմքում ընկած սահմանադրական կոնկրետ վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, այդ թվում՝ օրենքի դրույթի կիրառման պայմանը:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում

անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ».

- խնդրո առարկա անհատական դիմումով վիճարկվող ՀՀ դատական օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով առաջադրված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 որոշումը, ինչը, որպես գործի քննությունը մերժելու հիմք, ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Գարեգին Ղազարյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

30 ապրիլի 2015 թվականի
ՍԴԳԿՈ/ 1-14